# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ԹՈՒԿ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

ք.Երևան

*« 25 » « հոկտեմբերի » 2016թ.*
*ժամը 12 ⁰⁰*

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Չոբանյան | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության բյուջետային ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի պետ |
| Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Զոհրաբյան | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության բյուջետային ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի գլխավոր մասնագետ |
| Վ.Կիրակոսյան | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության բյուջետային ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի առաջատար մասնագետ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ Վ.Հակոբյան | ՀՀ բնապահպանության նախարարության «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի գնումների համակարգող |

## 1. Տեղեկություն «ԹՈՒԿ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի գնման առարկայի նախահաշվային գնի մասին

1.1. «ԹՈՒԿ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 109 463 120 (հարյուր ինը միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար հարյուր քսան) ՀՀ դրամ:

## 2. Տեղեկություն «ԹՈՒԿ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2.1. «ԹՈՒԿ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվել են ՀՀ բնապահպանության նախարարության «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ում, որը գտնվում է ք.Երևան, Չարենցի 46 հասցեում:

## 3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները

| Մասնակցի անվանումը | | Գտնվելու վայրը | Հեռախոսահամարը |
|---|---|---|---|
| 1 | «Վեյա» ՍՊԸ | ՀՀ ք.Երևան, Բյուզանդի 1/3 | (091) 42-62-03 |
| 2 | «Արարատշին» ՍՊԸ | ՀՀ ք.Արարատ, Խանջյան 12 | (091) 56-45-45 |

## 4. Հայտերի ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ.

4.1. «Վեյա» ՍՊ և «Արարատշին» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

## 5. Բացված յուրաքանչյուր առաջարկում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

----------------------------------------------------------------

(Ռ.Չոբանյան)

5.1. «Վեյա» ՍՊ և «Արարատշին» ՍՊ ընկերությունների կողմից առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

## 6. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

----------------------------------------------------------------

(Ռ.Չոբանյան)

6.1. «ԹՈՒԿ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման հրավերով սահմանված «Վեյա» ՍՊ և «Արարատշին» ՍՊ ընկերությունները փակ կնքված ծրարներով ներկայացրել են՝ դիմում բաց ընթացակարգին մասնակցելու, ներառյալ հրավերով նախատեսված լիցենզիաների պատճենները, հայտարարություն բաց ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին, հայտարարություն մասնագիտական փորձառության մասին, հայտարարություն տեխնիկական միջոցների մասին, հայտարարություն ֆինանսական միջոցների մասին, հայտարարություն աշխատանքային ռեսուրսների մասին, գնի առաջարկ, տուժանքի մասին հայտարարություն (մասնակցության հայտի ապահովում) և վճարման պահանջագիր: «Վեյա» ՍՊ ընկերության կողմից ներկայացվել է հրավերով չնախատեսված փաստաթղթեր՝ տեղեկանք հարկային պարտավորությունների մասին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից, տեղեկանք հարկային հաշվի մասին, գնի առաջարկին կից ծավալաթերթ-նախահաշվի բացվածքը, պետական ռեգիստրի վկայականը, «Վեյա» ՍՊԸ-ի կանոնադրությունը: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, բնօրինակ փաթեթում ներառված բոլոր պատճեն հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

## 7. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | Չափման միավորը | Գնի առաջարկները (ՀՀ դրամ) | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | «Վեյա» ՍՊԸ | | «Արարատշին» ՍՊԸ | |
| | | | Գինը | Գինը առանց ԱԱՀ | Գինը | Գինը առանց ԱԱՀ |
| 1 | Արարատ քաղաքի աղբավայրի բարելավման և ենթակառուցվածքների ստեղծման աշխատանքներ | դրամ | 98 882 590 | 98 882 590 | 98 409 930 | 98 409 930 |

7.1. «Վեյա» ՍՊ և «Արարատշին» ՍՊ ընկերությունների կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքի հաշվարկում թվաբանական անճշտություններ չկան:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

## 8. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

8.1. «ԹՈՒԿ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

## 9. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

9.1. «ԹՈՒԿ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Արարատշին» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ «Վեյա» ՍՊԸ-ին:

## 10. Հանձնաժողովը որոշեց՝

----------------------------------------------------------------

(Ռ.Չոբանյան)

10.1. Հանձնաժողովի քարտուղարին՝

10.2. Հրավերով սահմանված ժամկետում ուղարկել հարցում ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Արարատշին» ՍՊ և «Վեյա» ՍՊ ընկերությունների «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի վերաբերյալ:

10.3. Ծանուցել «Արարատշին» ՍՊԸ-ին՝ Հրավերով սահմանված կարգով, երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի հոկտեմբերի 28-ը ներառյալ, ՀՀ ք. Երևան, Չարենց 46 հասցեում գտնվող ՀՀ բնապահպանության նախարարության «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ ներկայացնել Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված՝ Հրավերի Հավելված 5-ով առաջարկված ձևաչափով գրությունը, որին անհրաժեշտ է կցել հրավերով պահանջվող որակավորումը հավաստող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

## 11. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

---

(Ռ.Չոբանյան)

11.1. «ԹՈՒԿ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել 2016 թվականի հոկտեմբերի 31-ին, ժամը 12:30-ին, ՀՀ ք.Երևան, Չարենց 46 հասցեում գտնվող ՀՀ բնապահպանության նախարարության «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ում:

## 12. Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝ ____________ Ռ.Չոբանյան

Հանձնաժողովի անդամներ՝ ____________ Լ.Զոհրաբյան

____________ Վ.Կիրակոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________ Վ.Հակոբյան